

Գեղարքունիքի մարզպետը մասնակցել է ՀՀ ԱԺ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստին

25.05.2016

Մայիսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի է ունեցել Ազգային ժողովի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստը, որին մասնակցել է նաև ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Մարզի ղեկավարը հանդես է եկել Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին հատկացված գումարների և մարզի համայնքներին հատկացված ֆինանսական համահարթեցման դոտացիաների կատարման տարեկան հաշվետվությամբ (եկամուտների և ծախսերի կատարողական):